ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2022 թվականի N 1665 - Ն

ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՐՏԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐՈՒՄ ՍՊԱՅԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 2.1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել ռազմաուսումնական հաստատություն ավարտած և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան հատկացնելու կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը, իսկ 2022/2023 ուսումնական տարվա շրջանակներում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից

10-օրյա ժամկետում, ապահովել տվյալ ուսումնական տարվա ընդունելության արդյունքներով օտարերկրյա պետությունների սահմանապահ զորքերի ռազմա-ուսումնական հաստատություններ ընդունված ու որպես կուրսանտ գրանցված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինների զինծառայողների քանակական և ուսումնառության ժամկետների ավարտի վերաբերյալ տվյալների ներկայացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ ապահովել պատրաստի բնակարանների գնման գործընթացների կազմակերպումը և դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախատեսումը՝ այն հաշվարկով, որ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվող համապատասխան քանակով պատրաստի բնակարանները Հայաստանի Հանրապետության պաշտպա-նության նախարարությանը հանձնվեն մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ռազմա-ուսումնական հաստատություն ընդունված և «Զինվորական ծառայության և զինծա-ռայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած զինծառայողների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ